

Արձանագրություն N 3-05/17

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ.-ի
մայիսի 25-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Բաղունց Գ.Ռ., Հակոբյան Ռ.Ս., Հակոբյան Շ.Հ., Շահբազյան Ա.Վ., Ավետիսյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Հովսեփյան Զ., Զաքարյան Գ. Է., (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող):

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ., դոցենտ), Հարությունյան Ռ.Մ., «Արցախ բերրի» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Է. Մկրտումյան, մոսկվայաբնակ, մեղվաբուծության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետ Ս.Գրիգորյան, Արցախում մեղվաբուծությամբ զբաղվող ֆերմերներ:

ՕՐԱԿԱՐԳ

- 1.«Մեղվաբուծություն» առարկայի դասավանդման և մեղվաբուծական հետազոտությունների կազմակերպման խնդիրների մասին.
- 2.Մարտակերտի ուսումնափորձնական հողամասում կատարվող աշխատանքների ընթացքի մասին.
- 3.Վառելիք ձեռք բերելու անհրաժեշտության մասին.
- 4.Այլ հարցեր.

Լսեցին

1-«Մեղվաբուծություն» առարկայի դասավանդման, արդյունաբերական մեղվաբուծության զարգացման նպատակով նոր տեխնոլոգիաների ներգրավման և մեղվաբուծական հետազոտությունների կազմակերպման խնդիրների մասին զեկուցումով հանդես եկան Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնափորձնական լաբորատորիայի ղեկավար՝ Գ.Ներսիսյանը, մեղվաբուծության հիմնախնդիրներով զբաղվող մասնագետ, մոսկվայաբնակ Ս.Գրիգորյանը, «Արցախ բերրի» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Է. Մկրտումյանը: Առաջարկվեց Արցախում արդյունաբերական մեղվաբուծության զարգացման նպատակով ներգրավել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական ներուժը, համատեղ ջանքերով ստեղծել ուսումնագիտական բազա, մշակել մեղվաբուծության արտադրանքների վերամշակման նոր տեխնոլոգիաներ և արտադրված արտադրանքի որակական հատկանիշները բացահայտելու նպատակով իրականացնել լաբորատոր հետազոտություններ:

Որոշեցին 1.1-«Արցախ բերրի» ընկերության հետ համագործակցության շրջանակներում Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ստեղծել ուսումնագիտական բազա,

1.2-հանձնարարել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնափորձնական լաբորատորիայի ղեկավար՝ Գ.Ներսիսյանին, դասախոս՝ Ս.Ադամյանին խորհրդի հետ համատեղ մշակել մեղվաբուծության զարգացման և մեղվաբուծական հետազոտությունների իրականացման ծրագիր և ներկայացնել սպասվող ակնկալիքները,

1.3-մշակել հետազոտական աշխատանքների ցանկ,

1.4-մշակել ակնամոմի արտադրության տեխնոլոգիա,

1.5-հայտարարել մրցույթ մեղվաբուծության բնագավառում մեծ կարևորություն ունեցող նոր տեխնոլոգիաների կիրառմամբ սարքերի (կշեռք, միկրոտեսախցիկ և այլն) վերաբերյալ,

1.6-հանձնարարել գլխավոր հաշվապահին դասախոս՝ Ս.Ադամյանին հունիսի 1-ից ամսական 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ հավելավճար սահմանել:

Լսեցին 2- Գիտխորհրդում քննարկեց Մարտակերտի ուսումնափորձնական հողամասում իրականացվող աշխատանքների ընթացքը, համաձայն որի 2հա տարածության վրա ցանվել է գետնանուշ, արդեն իսկ տնկվել են 4000 հատ պոմիդորի, 3000 հատ տաքդեղի, 1000 հատ՝ բադրջանի սածիլներ: Պարբերաբար իրականացվում են սածիլների խնամքի աշխատանքներ:

Որոշեցին 2-Ընդունել ի գիտություն Մարտակերտի ուսումնափորձնական հողամասում իրականացվող աշխատանքների ընթացքի մասին պրոռեկտոր՝ Ս.Գալստյանի տեղեկատվությունը:

Լսեցին 3-Քննարկվեց Շուշիի տեխնոլոգիական համալսարանի տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության պետ՝ Վ.Մուսայեյանի զեկուցագիրը, համաձայն որի առաջարկվում է Մարտակերտի շրջանի Նոր Հայկաջուր գյուղի, Ստեփանակերտի Մեհրաբյան 1-ին փակուղու թիվ 17 հասցեում գտնվող ուսումնափորձնական հողամասերում ուսումնափորձարարական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ ու Քարեգահ գյուղերի ջրամատակարարման համակարգերի, նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի մշակման աշխատանքները հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին իրականացնելու նպատակով ձեռք բերել 2տ վառելիք:

Որոշեցին 3.1-Հանձնարարել տնտեսական և կազմակերպչական հարցերի գծով վարչության պետ՝ Վ.Մուսայեյանին Մարտակերտի շրջանի Նոր Հայկաջուր գյուղի, Ստեփանակերտի Մեհրաբյան 1-ին փակուղու թիվ 17 հասցեում գտնվող ուսումնափորձնական հողամասերում ուսումնափորձարարական աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ ու Քարեգահ գյուղերի ջրամատակարարման համակարգերի, նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի մշակման աշխատանքները հունիս, հուլիս,

օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին իրականացնելու նպատակով ձեռք բերել 2տ վառելիք,

3.2-հանձնարարել գլխավոր հաշվապահին վառելիքի ձեռք բերման ֆինանսավորումը իրականացնել արտաբյուջետային միջոցների հաշվին:

Լսեցին 4- Գիտխորհուրդը քննարկեց ճարտարապետաշինարարական ֆակուլտետի գիտական խորհրդի ապրիլի 26-ի նիստի որոշումը, համաձայն որի առաջարկվում է մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի «Էլեկտրաէներգետիկա» մասնագիտության առաջին կուրսի մագիստրանտ՝ Գևորգ Սերժիկի Գևորգյանի ուսման վարձավճարում 60%-ի չափով զեղչ կատարել:

Որոշեցին 4- Շուշիի տեխնոլոգիական համալսարանի մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի «Էլեկտրաէներգետիկա» մասնագիտության I կուրսի մագիստրանտ՝ Գևորգ Սերժիկի Գևորգյանի երկրորդ կիսամյակի ուսման վարձավճարում 60%-ի չափով զեղչ կատարել:

Նախագահ՝	ստորագրություն	Հ.Վ.Թորքմաջյան
Քարտուղար՝	ստորագրություն	Ա.Ա.Առաքելյան